ՏԵՂԵԿԱՆՔ

«Փոխնակ մոր միջոցով մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող անձանց թույլտվություն տրամադրող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը եվ գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծի նպատակը:

2022թ-ի փետրվարի 22-ին ՀՀ Առողջապահության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft, հրապարակվեց օրենքի նախագիծ: Առաջարկվող նախագծով սահմանվում է փոխնակ մոր միջոցով մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող ապագա երեխայի կենսաբանական ծնող չհանդիսացող անձանց թույլտվություն տրամադրող միջգերատեսչական հանձնաժողովի կազմը, նրա գործունեության կարգը, այդ թվում պահանջվող և հանձնաժողովի կողմից ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև փոխնակ մոր միջոցով վերարտադրողական օժանդակ ծառայություններից օգտվելու վերաբերյալ դիմողի հայտը մերժելու հիմքերը:

Խնդրահարույց կետերը:

Նախագծի հավելված 2-ի 9-րդ կետում նշվում են դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը, որոնց մեջ ներառված են, մասնավորապես՝

- հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման տեսակով լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից տրված և կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ վավերացված՝ հոգեբույժի եզրակացության պահանջ, այն մասին, որ անձի/զույգի մոտ չեն հայտնաբերվել ՀՀ կառավարության 2018թ. հուլիսի 19-ի N 811-որոշման հավելվածով սահմանված հիվանդություններից որևէ մեկը
- հոգեբանի եզրակացություն այն մասին, որում ի թիվս այլ պահանջների ներառված է ամուսինների տարբեր սեռի լինելը:

Պահանջներից անգամ որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում հանձնաժողովը տալիս է բացասական եզրակացություն և անձի դիմումը մերժվում է:

Ուշադրության արժանի հանգամանքներ, օրենսդրական կարգավորումները:

- ՀՀ կառավարության 2018թ. հուլիսի 19-ի N 811-որոշման հավելվածով սահմանված հիվանդությունների ցանկում ներառված են տրանսսեքսուալիզմը և սեռական կողմնորոշումը որպես սեռական նույնացման, հոգեբանական և վարքային խանգարում:

Նունասեռականությունը ո՛չ հիվանդություն է, ո՛չ էլ հոգեկան խանգարում: Այս մասին փաստում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ): ԱՀԿ-ն դեռևս 1990 թվականի մայիսի 17-ին Հիվանդությունների միջազգային դասակարգման (ՀՄԴ) 10-րդ թարմացումով հեռացրել է «հոմոսեքսուալիզմ» ախտորոշումը հոգեկան խանգարումների շարքից:

Իսկ ՀՄԴ 11-րդ թարմացմամբ «տրանսսեքսուալիզմը» նույնպես հանվել է հոգեկան հիվանդությունների շարքից՝ տեղափոխվելով սեռական առողջության բաժին: Ի դեպ, «տրանսսեքսուալիզմը» կոռեկտ տերմին չէ և ներկայումս չի գործածվում:

- Նախագծի հավելված 2-ի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ մասերով պահանջվող փաստաթղթերից են նաև ամուսնության վկայականի պատճենի (եթե ամուսնացած է) ներկայացումը և զույգի/ամուսնության մեջ չգտնվող կնոջ՝ փոխնակ մոր ծառայությանը դիմելու բժշկական հիմնավորումը, տրված համապատասխան բժշկական կազմակերպության կողմից:

Վերլուծությունից հետևում է, որ նախագծով պահանջ չի դրվում, որպեսզի փոխնակ մոր ծառայությունից օգտվելու համար կինը լինի ամուսանացած:

Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնասեռականությունը դեռևս 1990թ-ից չի համարվում հոգեկան հիվանդություն, ուստի փաստացի ամուսնության մեջ գտնվող նույնասեռ զույգներին փոխնակ մոր ծառայություններից չօգտվելու արգելքը չհիմնավորված է:

Առաջարկություն:

- Հավելված 2-ի 9-րդ կետի 8-րդ մասից բացառություն նախատեսել տրանսսեքսուալիզմը,
- Հավելված 2-ի 9-րդ կետի 9-րդ մասից հանել «ամուսինների տարբեր սեռի» լինելու պահանջը: